Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

252

ՍԵՄ. ՅՈՒՇԿԵՒԻՉ.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Թարգմանեց
Ա. Գրիգորեան.

1.71
-84

ԹԻՖԼԻՍ 1904 Թ.
Տպարան „ՀԵՐՄԵՍ" Մադաթեանի փողոց № 15
(36)

15168
Ա9-115

25 NOV 2016
30 OCT 2006
252

Սիխ. Իրոցիրիշ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՒՄ

ՏԵՍԱԿՅՈՒԹԻՆ

891.71
Յռ-84 I
ար
1001

Թարգմանեց

Ա. Գրիգորեան.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
ՄԱՍՆԱ. Մասնակցություն
Ա. ՍՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադար. փող., № 15
1904 (38)

09 JUL 2013
12252

Доз. ценз. Тифлисъ, 11-го авг. 1904 года

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՒՐՈՒՄՍԿԻ—35 տարեկան, հիւանդ, նիհար, գունատ, ինտելլիգենտի մօրուսապատ դէմքով։

ՍԱՇԱ ՄՈՒՐՈՒՄՍԿԱՅԵԱ—Նրա կինը. 25 տարեկան, նուրբ կազմուածքով, տանջալի դէմքով, անշուք, մուգ գոյնի հագուստով։

ԴԱՌԱՅ.

Հիւանդանոց։ Փոքրիկ սենեակ, սի մահճակալով։ Պատերը սպիտակացրած, յատակը ներկած ու մաքուր։ Փոքր ու մեծ սեղաններ, մեծի վրայ գրքեր և օրագիրներ։ Երեք աթոռ։ Բոլորը սպիտակ։

Մուրոմսկին հիւանդի շորով պառկած է մահճակալի վերայ։ Փոքր առաջ նրան կաշուի տակ դեղ են սրսկել։ Կամացուկ հառաչում է։ Դուռը մեղմ ծեծում են։ Մուրոմսկին չի պատասխանում։ Թխկոցը կրկնւում է։ Դուռը կամացուկ բացւում է։ Զգոյշ քայլերով ներս է գալիս կինը։ Առվայրկեան կանգ է առնում, յետոյ արագ մօտ է վազում էրիկին։

———○○———

Մր—ա. Լացե՞լ ես, Վալոդիա։ (Կռանում է նրա վրայ, նայում է աչքերին ու համբուրում)։

Մր—իյ. (Վեր է կենում եւ դէպի կինն է ծռդուում)։ Սաշա։ Աստուած իմ։ Աստուած իմ։

Մր—ա. Վալոդիա, ինչ է եղել քեզ... (Չի կարողանում շարունակել, թուլացած ընկնում է նրա մօտ, աթոռի վերայ)։

Մր—իյ. Հէնց նոր ինձ բժշկում էին։ Նորից բանի կերպով այն անիծեալ թոյնը կաշուիս տակը լցրին։ Ես չէի ուզում, հեռացնում

էի, գոռգոռում... մարմնիս վրայ ողջ տեղ էլ չկայ։Որտեղ մատ խփես, ցաւում է, վիրաւոր է...Ճարունակ շունչս կտրւում է, գլուխս արբաքում—և այժմ պառկել էլ չեմ կարողանում։ Ես չե՛մ քնում չե՛մ ապրում...

Մր—ա. (Ձեռները ուժգին տրորելով)։ Ի՞նչ կարող եմ անել, ա՜խ, ի՜նչ անե՜մ ես։ Ինչո՞ւ ես քեզ չեմ կարողանում օգնել։ Խեղճ իմ Վալոդիա։ Երբ տեսնում եմ քո տառապանքը, իմ ապիկարութիւնը, յուսահատութիւնը գժւեցնում է ինձ։ (Լալիս է)։

Մր—իյ. Նրանք կսպանեն ինձ...

Մր—ա. (Ուժգնութեամբ)։ Անցեալ անգամ բժիշկ Նիկիլն ինձ ասաց, որ դու շուտով կ՚առողջանաս։ Եւ ես նրան հաւատում եմ, Վալոդիա։ Ես հաւատում եմ... Նա քեզ իզուր տեղը չի չարչարիլ...

Մր—իյ. (Դառնութեամբ)։ Բայց արդեօք ես կլաւանա՞մ։ Նայիր մէկ ձեռներիս, վզիս... Առաջ դողում էին. մէջքիս մի ամբողջ շերտ դադրած է։ Ես ջանք էի անում և համբերում էի։ Այժմ, ահա արդէն երեք շաբաթ է, այդ սարսափելի սրսկումներն են անում... էլ ույժ չունեմ... Սաշա, տա՛ր ինձ այստեղից դուրս. ես ուզում եմ տանը, քեզ մօտ հանգիստ առնել...

Մր—ա. Հանգստացիր, իմ բախտ, իմ ու-

բախութիւն։ Այստեղ քեզ չարիք չեն անում։ Եթէ գիտենայի, թէ մի ուրիշ տեղ քեզ համար լաւ կլինի, ես քեզ ձեռներիս վերայ այնտեղ կը տանէի։ Բայց հիւանդութիւնից փախչելու համար էլ ուր պիտի գնալ, ուր թաղնուել։ Այստեղ կը փրկեն քեզ... Միտ բեր, թէ ինչպէս էիր առաջ այստեղ գալ ուզում...

Mr—իյ. Ես այժմ միայն մի բան եմ ուզում՝ հանգիստ... Ես տանջուած եմ ու հիւծուած, անո՜յժ... Մահը լաւ է, քան այս տանջանքը...

Mr—ա. Վալոդիա, վատն արդէն անցել է... Այնքան ժամանակ հիւանդ էիր, և ոչ ոք չիմացաւ, թէ ինչով։ Այժմ շնորհիւ բժիշկ Նեվիլի ամեն ինչ պարզ է։ Քիչ էլ ջանք, քիչ էլ քաջութիւն, և դու առողջ կը լինես։ Համբերիր, սիրելիս, էլի համբերիր, յետոյ նոր կեանք կ'սկսի։ Բոլորը կը մոռացուի...

Mr—իյ. (Հառաչում է). Ինչպէս ձեռս թմրել է։ (Ձեռքի համար յարմար տեղ է փնտռում, բայց չի գտնում։ Կինը մօտեցնում է իւր աթոռը մահճակալին, զգուշութեամբ վերցնում է էրիկի ձեռքը ու հանդարտ շոյում է)։

Mr—իյ. (Աւելի հանդարտ)։ Մի բան պատմիր ինձ, Սաշա... միայն ոչ հիւանդութեան և ոչ բժիշկ Նեվիլի մասին։

Mr—ա. Ես ինչ կարող եմ պատմել։ Այ-

ժըմ ոչ մի տեղ չեմ լինում և ոչնչով չեմ հետաքրքրուում։

Mr—իյ. (Անհամբեր)։ Ա՜խ, Աստուած իմ, պատմիր, ինչ ուզում ես։

Mr—ա. Աւելի լաւ չի լինի, մի բան կարդամ։

Mr—իյ. (Դրգռուած)։ Չեմ ուզում։ Գրքերը ձանձրացրել են ինձ։

Mr—ա. (Ընդհատելով, շտապով)։ Լաւ, հոգեակս, լաւ, միայն մի վրդովուիր։ Իսկոյն քեզ մի բան կը պատմեմ... (Մտորում է, յետոյ թոյլ ժպտում է)։ Դէ, Վալոդիա, լսիր ու ծիծաղիր, —դու ինքդ ես մեղաւոր,—ես քեզ մի հէքաթ պիտի պատմեմ... (Սկսում է խօսել դանդաղ, երգելով, կարծես երեխայի հետ խօսի։ Մուրոմսկին ըսկզբում անհանգիստ շարժումներ է անում, բայց սակաւ առ սակաւ հանդստանում է)։

Կար չկար, մի մեծ և հզօր թագաւորութեան մէջ մի գեղատի աղջիկ կար։ Նա ոչ ալք էր և ոչ արքայադուստր։ Ճակատն ոչ ասող կար, և ոչ էլ անպատում գեղեցկութեան և կամ շքեղ ապարանքների տէր էր, նրա հօր տունը չէր գտնուում աղմկալից մայրաքաղաքում, այլ հեռու յետ ընկած քաղաքում էր, 7 սարի 7 ծովի այն կողմը...

Mr—իյ. (Ծպտալով)։ Ա՜յ, այդպէս։

Mr—ա. Հա՜ այդպէս, ուրեմն... 7 ծովի այն կողմը... Այո՛, այո՛...Նա գգուանքով ու սի-

րով էր շրջապատուած, անհոգ ու երջանիկ էր, ընաւ ապագայից վախ չունենալով...

Մր—իյ. (*Խլածայն*) Վա՜խ։

Մր—ա. Այո. վախ, հոգեակս... Աղջիկն օրով էր աճում ու այնպէս արագ որ կեանքը նորան երազ էր թւում։ Նա կեանքը չէր ճանաչում։ Միայն լսել էր, թէ կայ վիշտ ու ցաւ բայց կարծում էր, որ ամեն մարդ ինքն է իւր դժբախտութեան պատճառը։ Նորան թըւում էր, թէ կարող է ամենքի սխալը մատնանիշ անել ու փրկել նոցա իւր խորհուրդներով...

Մր—իյ. (*Ընդհատում է խղճահարութեամբ*)։ Բոլորս էլ այդպէս ենք մանուկ հասակում...

Մր—ա. (*Մելամաղձօրէն ժպտալով*)։ Միամիտ էր նա... ուսերին ոսկէ թեւեր ունէր, ու այնքան թեթև թեւեր, որ նոցա ծանրութիւնն էլ չէր զգում, ու այնքան թափանցիկ, որ բոլորին էլ անտեսանելի էին։ Եւ այդ թեւիկները ոչ մի րոպէ հանգիստ չունէին։ Բաւական էր, նա մտածմունքի մէջ ընկնէր—նրան վայրկենաբար երկինք էին բարձրացնում պտտցնում էին ամպերի յետևը, աստղերի միջև, և դժկամակութեամբ էին երկիր ցած բերում։ Այդ բարձունքից երկիրը նրան սքանչելի էր թւում, կեանքը՝ գրաւիչ և դիւրին, մարդիկ—բարի... (*Կանգ է առնում*)։ Վալոդիա, այժմ քեզ լա՞ւ ես զգում։

Մր—իյ. (*Երազելով*)։ Այո, այո, քնքուշիկս, (*Համբուրում է ձեռքը*)։ Ինչո՞ւ չես շարունակում։

Մր—ա. (*Ձեռքը դէմքին քսելով*)։ Ես շարունակում եմ, Վալոդիա... Մի գեղեցիկ օր մեր աղջիկը վճռում է, որ ինքն արդէն չափահաս է, և ժամանակ է արդէն աշխարհ տեսնելու և ճանաչելու այն կարևոր ու բարդ խնդրը, որ մարդոց մեծամասնութեան համար յաւիտենական գաղտնիք են։ Եւ ահա նա երկար ժամանակով թողնում է սիրելի հին տունը, հասնում մի ուրիշ մեծ քաղաք և միանգամից նոր կեանքի մէջ է նետւում։ Նա իւր հետ տանում է դէպի ինքն ունեցած հաւատը, և մի առ ժամանակ ապրում է խաղաղ, ինչպէս և առաջ։ Առաջուայ պէս սաւառնում էր օդի մէջ, և երբեմն միայն նկատում, որ այժմ դէպի օդը թռչելը աւելի ծանր է, քան տանը. կարծես մի ծանրութիւն կպած լինէր ոտներին։ Այստեղ նա իր նման ջահէլ աղջիկների էր հանդիպում, որոնք ժողովել էին լայնածաւալ թագաւորութեան բոլոր ծայրերից, և սիրեց նոցա...Մի տարին արագ անցաւ, բայց ոչ անհետևանք, այդ տարին իւր յետևից մի նոր և ծանր բան թողեց։ Աղջկայ հոգում բուն դրաւ կատարեալ միայնակութեան սարսեցուցիչ զգացմունքը։ Նորա առ երևոյթ մերձաւոր մարդոց շրջանը, թէպէտ և շատ ծա-

նօթներ ունէր, և ինչքան էլ ասես հետաքրքիր ու բովանդակալից էր այդ ահագին քաղաքի կեանքը, էլի նորան պակասում էր արիւնակիցների զգուանքն և ջերմ սէրը, որ առաջ անթափանցելի զրահի պէս պահպանում էր արտաքին աշխարհից։ Կեանքը իր գոյութիւնը զգալ էր տալիս հազարաւոր մանր վհատեցուցիչ խայթոցներով։ (Վեր է կենում եւ քայլում է սենեակում։ Երիկը հայեացքով հետեւում է նորան, մտածում ու հանդարտ հառաչում է)։

Եւ ահա անձուկը պատեց նրան, վրան ինչ որ ծանր ծուլութիւն եկաւ, որն իրենից վանելու նա ջանք չէր անում։ Անզօր վայր իջան ոսկէ թեւերը... լոկ միօրինակ, տխուր, դանդաղ մտքերը մնացին նրանում։ Կեանքի սարը, որ նա առաջ չէր նկատում, նրա ուշը գրաւեց, ձեւափոխուելով և հրէշաւոր կերպով զարգանալով նրա խաւար տրամադրութեան մէջ. նրան թւում էր, որ այդ սպառնացող, հուժկու սարը ամենուստեք դէպի նա է ձգւում, դէպի նորա հոգու խորքը, և որ նրա առաջ ինքը թոյլ և անզօր է։ Ու նա կեանքից վախեցաւ...

Մր—խյ. (Գոհ)։ Այդ դու ես, Սա՛շա... ես քեզ ճանաչում եմ... Շարունակիր, շարունակիր (Ձեռքից բռնում է)։

Մր—ա. (Նորից նրա մօտ է նստում, եւ ձայնի մէջ խղճահարութիւն կայ)։ Նա իրեն այնպէս չնչին զգաց իրեն վերահասու այդ ահաւոր, անյայտ ապագայի առաջ։ Կեանք անցանե՛լ։ Այդ բանը նորան հերոսութիւն էր թւում, և հոգին յարգանքով էր լցւում դէպի ծեր մարդիկ, որ արդէն ունեցել են այն փորձութիւնը, որ այժմ իրեն սարսեցնում է։ Խե՛ղճ աղջիկ. նա հիւանդ էր ու այնչափ անփորձ։ Դէպի ինքը հաւատը կորցրեց. կարծես կախարդներ լինէին նորան շրջապատած, և նոցա մէջ ինքը կռւում է, թակարդն ընկած գազանի պէս... Բայց, սիրելիս, իմ հէքաթն էլ ամեն մի հեքաթի պէս է վերջանում։ Դեռահաս աղջկան օգնութեան հասաւ մի բարի ասպետ։ Նա ոչնչացրեց այդ կախարդութիւնները և հեռու քշեց սև մղձաւանջը, որի մէջ աղջիկը խեղդւում էր...

Մր—խյ. (Տխուր)։ Այո՛, Սա՛շա, իսկ այժմ քո ասպետը մեռնում է...

Մր—ա. (Համբուրում է նորա ձեռը)։ Ո՛չ, նա կապրի... Ոչ մի ասպետ առանց իր գործը կատարելու չպիտի մեռնի, իսկ քոնը դեռ բնաւ վերջացած չէ... Յիշո՞ւմ ես, թէ ինչպէս դու առաջին անգամ պատահեցիր քո դեռատի աղջկան։

Մր—խյ. Յիշում եմ, սիրելիս, ես քեզ

մօտ Կատիայի հետ միասին եկայ: Դու մէն մենակ էիր, քո մթին ու ցուրտ սենեակում այնպէս անբա՜խտ և ձգո՜ւած էիր երևում: Չէ, ես իսկոյն գուշակեցի, որ մի տհաճ բան է կատարւում հետդ:

Մr—ա. (Տարակուսած): Ես գոհ չէի ձեր այցելութիւնից: Դուք ինձ խանգարում էիք, իսկ թէ ինչո՞ւ, ես չպիտի կարողանայի ասել: Ես չեմ յիշում, թէ ինչի մասին էինք խօսում: Նոյնպէս չեմ յիշում, թէ խնդրեցի՞ արդեօք կըրկին այցելել ինձ...

Մr—իյ. Այն ժամանակ երբ քեզ տեսայ շատ ծանր տպաւորութիւն թողիր վրաս: Քո անձուկը, քո յանկարծական արցունքները վարակեցին նոյնպէս խեղճ Կատիային, ու ես ձեզ մեծ դժուարութեամբ հանգստացրի...

Մr—ա. Իսկ երկու երեք օրից յետոյ դուք կրկին ինձ մօտ էիք,—յիշո՞ւմ ես: Իսկ յետոյ սկսեցիք ամեն օր գալ: Դուք ստիպում էիք ինձ, որ ուտեմ, խմեմ, հագնուեմ, ման գամ, և ուշ չէիք դարձնում իմ դժկամակութեանն ու արցունքներին, ու հետզհետէ դէպի կեանքն էի վերադառնում: Ես այնպէս լաւ էի զգում ինձ, կարծես թէ մութ նկուղից լոյս աշխարհ էի դուրս եկել... Քեզ հետ բերում էիր մանուշակի փունջեր, գրքեր՝ որ ուղարկուած էին քեզ կարծիքդ իմանալու համար: Փաղցում ինձ

տպատում էիր պարապմունքներիցս վերադառնալու ժամանակ, ինձ տուն էիր հասցնում... Սովորաբար ես քեզ առաջարկում էի ներս մըտնել, իսկ երբեմնակի ցանկութիւն էի զգում թէ քեզ, թէ ինձ չարչարելու, ու այդ ժամանակ ես հէնց դռների մօտ բաժանւում էի, վեր էի վազում ու լուսամուտից նայում էի, թէ դու ինչպէս դանդաղ ու ասր կախ հեռանում էիր: Դու յաճախ յետ էիր նայում, իսկ ես արգաւթեամբ թագցնում էի գլուխս...

Մr—իյ. (ժպտալով): Կարծում ես, թէ այդ չէի՞ նկատում:

Մr—ա. Իսկ յետո՜յ... Կամաց կամաց դու ինձ ծառայութիւնների այնպիսի ցանցով պատեցիր, և այնպէս նախատեսութեամբ ու քնքշութեամբ ազատում էիր ամեն տեսակի մանր հոգսերից ու անախորժութիւններից, որ ես էլ չէի ճանաչում իմ կեանքը, այնպէս որ նա գլուխն էր անցնում: Մանուկ հասակում բնաւ ես այնպէս լաւ ու անհոգ չէի եղել. ինձ թւում էր, որ ես թանկագին քար եմ՝ դրած մաքուր ու գեղեցիկ թաւշեայ բնի մէջ, դու ինձ համար անհրաժեշտութիւն դարձար. ես այլես վախենում էի այն մտքից, թէ ինչ կլինի վիճակս ամառը հայրենիք գնացած ժամանակ, և ես մնացի: Ինչ հիանալի ամառ էր այն, ամբողջ օրը միասին, ազա՜տ, երխատ-

սարդ, բախտաւոր և ապագայի լուսաւոր ու զուարճալի կեանքով... (Ցանկարծ)։ Բայց ուր գնաց այդ կենդանութիւնը։ (Լալիս է)։

Մr—իյ. (Վշտով կնոջն է նայում)։ Ես լաւ բան գրեթէ չեմ յիշում, կարծես թէ այն չունք ունեցել երբէք, (Մտորում է)։ Ինձ թուում է, թէ ամբողջ կեանքս հիւանդ եմ, ու երբէք առողջ չեմ եղել, և այդ կեանքն այնքան ձանձրալի է, որ ուրախութեամբ կը ձգէի, բայց ես այնպէս խղճում եմ քեզ... թողնել մենակ, առանց ինձ, անօգնական, օտարների մէջ...

Մr—ա. (Լալիս է)։ Վալդիա, Վալդիա։

Մr—իյ. Ի՞նչ արած, ամբողջ օրերով պառկած մտածում եմ, թէ ինչ դրութեան կը լինիս դու, խղճուկս. թող ձեռքս, սիրելիս. դու արդէն յոգնել ես, ցաւն էլ անցել է. (Մr—ան երիկի ձեռքը զգուշութեամբ մահճին է դնում)։

Մr—իյ. Ա՜յ, այդպէս... Ինչ տարօրինակ է, երբեմն տեսնում ես անցեալը այնպէս զուտատ, անգոյն, կարծես թէ մառախուղի մէջ լինի... և այն ժամանակ ինձ թուում է, որ ես ոչ թէ ինձ եմ յիշում, այլ մի ուրիշ մերձաւորի, որին լաւ ճանաչում եմ... Ես ակամայ և ցաւելով տեսնում եմ մի փոքրիկ և աղքատ տղայ, որին դրել են երկայն և դժուար ան-

ցանելի ճանապարհի վրայ և հալածում են. երբ նա կանգնում է կամ ընկնում, ծեծում են, ինչպէս ուժասպառ ձիուն կը ծեծեն։ Եւ երկար, շատ երկար ժամանակ նրան նոյն դրութեամբ եմ տեսնում... Յետոյ նա պատանի է դառնում։ Նա արդէն լաւ սովրեցրած է ու ինքն է առաջանում, առանց ծեծի, որովհետև կարծում է, թէ այդ ճանապարհի ամեն մի ոլորապտոյտին բախտի է տիրանալու։ Աւաղ, նա ոչ մի տեղ այդ բախտը չի տեսնում, բայց միշտ առաջ է գնում, մինչև որ հասակն առնելուց յետոյ համոզուում է, որ այդ ճանապարհին ոչինչ, ոչինչ չկայ... և որ անսոր ծայրը գերեզմանին է հանգչում։ Եւ այդ գերեզմանն այժմ ես պարզ տեսայ։ Հիւանդութիւնը մի թռիչքով ինձ իմ ճանապարհի ծայրին հասցրեց...

Մr—ա. (Լալիս է, բայց շուտով հանգստանում է)։ Սիրելիս, հերիք է այդպէս խօսես։ Կառողջանաս լսում ես, կառողջանաս։ Մենք նոր կեանքով կ'ապրենք, այս անգամին աւելի լաւ կեանքով, քան ինչ առաջ էր։ Ինչպէս ես յիմար էի. այնպիսի ոսկեայ երջանիկ ժամանակը անիկաս անցնում էր, անցնում օր աւուր, տարեցտարի, և ես նորա արժէքը չէի հասկանում։ Ես բախտը մեզնից դուրս էի փնտռում, իսկ նա ծածկաբար հէնց մեր մէջ,

մեր սիրոյ մէջն էր դանուում, և նրանում, որ մենք իրարից անբաժան էինք։ Ես տխուր էի և միշտ մի աւելի լաւ բան էի սպասում ապագայից, բայց այդ լաւը հանդարտ, աննկատ կերպով հեռու էր թռչում... Այժմ ես կեանքից էլ բան չեմ պահանջում կամ խնդրում. միայն կուզէի յաւիտեան քեզ հետ լինել. Ա՜խ, մենք ինչպէ՜ս կ՚ապրէինք։

Մr—իյ. (ընդհատելով)։ Չեմ հաւատում, Սաշենկա...

Մr—ա. Պիտի հաւատաս (խօսում է նորից մեղմ եւ երգի ձայնով)։ Երբ դու այստեղից դուրս կը գաս,—իսկ ես յուսով եմ, որ այդ 2 ամսից յետոյ կը լինի՝ Մայիսին—մենք ծովի ափին փոքրիկ ամառանոց կը վարձենք, որովհետև քեզ պէտք կը լինի մաքուր, թարմ օդ։ Մենք մի խիտ ծածկուած տաղաւար էլ կ՚ունենանք, ուր ամբողջ օրը նստած կնայենք ծովին։ Ես քեզ համար ցածրիկ, լայնարձակ բազկաթոռ կը ճարեմ, յետոյ այն օրն էլ կը հասնի, որ միասին ծովի ափ կիջնենք զբօսնելու։ Մենք երեխաների նման հանաքներ կանենք, կը հռհռանք, կը թեթևանանք և քարեր կը ձգենք ծովը...

Մr—իյ. Այո՛, իմ ուրախութիւն, երբ ես կառողջանամ, մեզ համար նոր, լաւ կեանք կը սկսի։ Ա՜խ երբ ինձ հետ խօսում ես, ես ամեն

ինչ մոռանում եմ և հաւատում հրաշքին, հագիս մշտական երկիւղի մէջ է, և քո խօսքերն են միայն այդ երկիւղը փարատում, բայց դըրա փոխարէն յետոյ, երբ դու հեռանում ես, ինձ այնպէս վատ եմ զգում. իմ և ամբողջ աշխարհի միջև մի թափանցիկ, բայց այնպէս անանցանելի պատ է բռնում, որ ես նրանից այն կողմն անցնել չեմ կարող։Երբ խօսում են ինձ հետ, լսում եմ, պատասխանում, ժպտում, ձևացնում, թէ հետաքրքրւում եմ և ապրում նոյն կեանքով՝ ինչպէս և իմ շրջապատողները, իսկ իրօք ես այդ կեանքից այնքան խորթ, այնքան հեռո՜ւ եմ։ Ես ինքս ինձ համար եմ, առանձին աշխարհ եմ։ Իմ հոգու խորքում մի մեծ, սարսափելի բան կայ ծածկուած։ Ես միշտ ականջ եմ դնում այդ ծածկութեանը, և նա ինձ կեանքից զատում է... (Հազում է)։ Սաշա, ջուր տուր ինձ...

Մr—ա. (Բաժակը լցնելով տալիս է նրան)։ Վալոդիա, լաւ է, որ այդչափ չխօսես. այդ քեզ թուլացնում է։

Մr—իյ. Ո՛չինչ, Սաշա, ես միշտ լուռ եմ. միայն քո առաջ եմ սիրտս թեթևացնում։ (Երկար լռութիւն. Յետոյ նորից սկսում է. յետագայ խօսքերն ընդհատ ընդհատ է ասում)։ Ես ամենից լաւ ինձ գիշերն եմ զգում. պառկած եմ լինում և մտածում, և ոչ ոք չի խանգարում ինձ. եր-

ՀԱՆՐԱՅԻՆ
Публичная

բեմն ես այստեղ պատուհանի մօտ նստում եմ և նայում երկնքին. վերևը, բարձր, փայլում է Մեծ Արջի սիրուն համաստեղութիւնը, և նրա վայելչական կազմից երկնային ջերմութիւն է փչում. ներքևը մութ է և լուռ, փողոցը մեռած։ Միայն փողոցի գլխին ծառայի անշարժ ստուերն է երևում. երբեմն մենաւոր յոգնած մարդ է անցնում, որի ոտնաձայնը ինձ էլ է հասնում և գիշերային լռութեան մէջ մի տեսակ լուրջ և խորհրդաւոր է թուում։ Եւ ես մտածում եմ, որ այդ լռութիւնը խարուսիկ է։ Այ, ես հանգիստ նստած եմ. բայց եթէ իրաւ է, որ երկրի վրայ ոչ մի բան անյետ չի կորչում, և որ, ուրեմն, տառապանքն էլ մի որև է տեղ, մի բանի մէջ պիտի արձագանգ գտնի, հապա այն ժամանակ ո՞չ ականջին՝ այլ զգայուն սրտին միայն լսելի ինչ հառաչներ պիտի դուրս գային իմ սենեակից։ (Ջուր է խմում, մի բիչ հանգստանում եւ նորից սկսում)։ Այսպիսի լռիկ տներ լցուած են հազարաւոր մարդկանցով. նոցանից ո՞վ է երջանիկ. ինձ թուում է, որ լսում եմ, զգում եմ նոցա սարսափելի,անվերջ հեծկլտանքը, որ հանդարտ գիշերի նման պատում է քնած քաղաքը... Բայց ինչպիսի մի աւելի զօրաւոր իսկապէս տնեղ հառաչ պէտք է թռչէ մեր խեղճ տառապեալ երկրից դէպի տարածութիւնը։ Եւ մեր երկրագունդը տիեզերքի մէջ միակ չէ. կեանքն ամենուրեք է սիրուած։ Գիշերը փայլող աստղերից իւրաքանչիւրն այդ կեանքի մի մի աղբիւր է, այսինքն աղբիւր տառապանքի, որովհետև կեանքն ու տառապանքը հոմանիշ են։ Ու լալիս են Մեծ Արջի շողշողուն ադամանդները, ու լալիս է ինձ երևացող աստղերի փոշին... Միտ առ, սիրելիս, ինչ հոկայական, աներևակայելի ներդաշնակութիւն է յաւիտենականապէս կատարուում տիեզերքի մէջ...(կանգ է առնում, Մր—ան խիստ ուշադիր լսում է նրան)։ Այո, սիրելիս, այդ գիշերները ինձ սովորեցրին... ես առաջ շատ բան միայն հաւատով էի ընդունում, իսկ այժմ այդ բոլորը անցել է ներսս, հոգուս մի անբաժան մասն է դարձել. կեանքը, բնութիւնը, և թէկուզ հէնց Աստուած, մեզ ժառանգութիւն են տուել տառապանքը և հեռուից դիտում են, թէ ինչպէս մենք ուժասպառ ենք լինում։ Ամենից բարձր, ազնիւ գործը, որ մարդ ընդունակ է կատարելու, այդ տառապանքը ոչնչացնելն է։ Ուրիշի արցունքները ցամաքացնելով, ուրիշի վիշտը թեթևացնելով մենք այն ենք անում, ինչ ոչ ոք աշխարհում անկարող է անել, Մենք աշխարհից բարձր ենք կանգնում, դառնում ենք նրանից ուժեղ...

Մր—ա. Միայն առողջացիր, Վալդիա,

մենք կսկսենք քո ուզածի պէս ապրել, քո ցուցմունքով ապրել...

Մր—իյ. Օ՜. պէտք է ուրիշ կերպ ապրել, պէտք է կեանքի մէջ ուրիշ նպատակներ գըտնենք մեզ համար։ Եթէ ես նորից դարձնէի ինձ առողջութիւնս, այժմ, ես մեզ համար ինչ կեա՜նք կը ստեղծէի։ Ցաւխենակա՜ն «եթէ»։ (Դժուարութեամբ ելնում է եւ նստում անկողնում)։ Ես տեսել եմ, թէ ինչպէս ամառուայ շոգ օրերին կենդանաբանական պարտիզում տաք երկրների թռչուններին վանդակից դուրս են թողնում։ Այնտեղ չի նեղացնում նոցա վանդակի ցանցը, չի վախեցնում մարդու ձեռքը. տաք արեւն է ջերմացնում նոցա, եւ նոքա սուսուսում են, նստում, ուր կամենան է ցանկալի՝ ծառերի վերայ, խոտերի մէջ, արհեստական լճակների ջրի մէջ։ Պէտք նրանց թուի, թէ ազատութեան մէջ են ապրում, որովհետեւ այդու՝ նրանց յատկացրած մասում վերեւ անցկացրած թելերից հիւսած ցանցը ամենեւին աննկատ է նոցա։ Բայց եթէ անդուսպ ցանկութիւնը նոցանից մէկն ու մէկին դէպի հայրենիք է ձգում, եւ նա թեւերի ուժեղութիւնը փորձել է ուզում, միանգամից վերեւ է բարձրանում, ինչքան որ ցանկութիւնը ուժեղ է, կամ թռիչքն արագ, այնքան էլ անողոք ցանցը ուժգին պիտի հարուածէ նորան, եւ նա երկար պիտի թափահարէ

ջարդուած թեւը։ Ցիմար մարդիկ ծիծաղում են խեղճ թռչունի վերայ. ես էլ եմ ծիծաղել.— ես երիտասարդ էի այն ժամանակ, այժմ, Սաշա, ես ինքս մի այդպիսի ապաբախտ թռչուն եմ։ Եւ ես լալիս եմ, լալիս... (Գլուխը իջեցնում է կնոջ ուսին. կինը գրկում է նրան, երկուսն էլ արտասուում են։ Լռութիւն)։

Մր—իյ. (Հազիւ լսելի)։ Սաշա, ինձ զգուշութեամբ պառկեցրու. պառկեցրու, գլուխս պտոյտ գալ սկսեց։ (Նրա ձեռները թուլացած ընկնում են վերմակի վրայ։ Նա սկսում է պառկել)։

Մր—ա, (Ամբողջովին դողալով)։ Աստուած իմ. Վալոդիա. քեզ ի՞նչ է պատահել։ (Զգուշութեամբ դանդաղ պառկեցնում է Մր—ուն. կռանում է, եւ յանկարծ կոչում)։

Վալո՜դիա, Վալո՜դիա, լսո՞ւմ ես ինձ. (Լռութիւն, աւելի բարձր), Վալո՜դիա, Վալո՜դիա։

Մր—իյ. (Բանալով աչքերը. թոյլ)։ Լսում եմ, Սաշենկա, մի՛ անհանգստանալ.

(Դռան թխկոց. գալիս է ծառան)։

Ծառայ. (Մր—ային)։ Ժամի երեքն է...

Մր—ա. (Աղաչական ձայնով, արագ, շտապելով)։ Իսկոյն, իսկոյն։ Էլի մի րոպէ, ես արդէն դուրս եմ գալիս,

(Ծառան հեռանում է)։

Մր—ա։ Վալո՜դիա։

Մր—իյ. (Դժուարութեամբ) Ես արդէն ինձ

լաւ եմ զգում, Սա՛շենկա․ գնա, գնա՛, հանգիստ եղիր։

Մր—ա. (*Ձեռներով յուսահատական շարժում է անում*)։ Ինչո՞ւ համար միայն օտար մարդիկ կարող են քեզ մօտ մնալ, Վալո՛դիա, ինչո՞ւ ես չեմ կարող մնալ։

Մր—իչ. Դո՛ւրս գնա՛, Սա՛շա։

Մր—ա. (*Երկար համբուրում է նրան*)։ Մնաս բարև, մնաս բարև, Վալո՛դիա։

Մր—իչ. Գնա՛ս բարև, գնա՛։

Մր—ա. (*Դժուարութեամբ պատռւում է նրանից մօտենում է դռան, կանգնում, լալով ասում*)։

Ցտեսութիւն։ (*Դուրս է գնում*)։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0316442

12.252